ՈՒՍԱՆՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ԱՇԽԵՆ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ,

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ *yuzbashyan.ash@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v1i44.45

ԱՄՓՈՓՈՒՄ

Բարձրագույն կրթությունը սովորողի մոտ պետք է ձևավորի այնպիսի արժեհամակարգ, որը լինի մրցունակ, տվյալ ժամանակաշրջանին համընթաց: <<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացը սովորողի մոտ ձևավորում է լեզվամտածողություն, մշակութային և իդեալիստական արժեքներ: Իբրև լեզվական գիտակարգ՝ դասընթացը սովորողի մոտ զարգացնում է ինքնուրույն հետազոտություններ և եզրահանգումներ կատարելու հմտություններ: <<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացը ուսանողի մոտ ստեղծում է գիտական, իդեալիստական, նատուրալիստական արժեհամակարգ: Հոդվածում դիտարկված է տարբեր ժամանակներում արժեհամակարգի ձևավորման խնդիրները, որոնք բնականորեն և օրինաչափորեն փոխվում են ժամանակի պահանջներին համահունչ: Հետևապես, ելնելով ժամանակի պահանջներից, <<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացում արժեքները ներկայացված են գիտական և գործնական տեսանկյունների միասնությամբ: Այստեղից էլ, հոդվածի նպատակն է արժևորել և անդրադառնալ հայոց լեզվի պատմության այն խնդիրներին, որոնք նպաստում են ուսանողի իդեալիստական, նատուրալիստական, լեզվական արժեհամակարգի ձևավորմանը և ամբողջացմանը: Ուստի, առաջադրվում է արժեհամակարգի ձևավորմանը միտված վարժությունների, հնարների համակարգ՝ ժամանակակից ուսանողի պահանջների, հետաքրքրությունների դիտարկմամբ, որոնք ձեռք են բերվում ինքնուրույն վերլուծությունների, հետազոտությունների արդյունքում:

Բանալի բառեր՝ արժեբանական համակարգ, հայոց լեզվի պատմություն, գրաբար, իդեալիստական արժեք, հնդեվրոպաբանություն, վիմագիր, սեպագիր աղբյուրներ, մշակութային արժեք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գոյության սկզբնական շրջանից մարդը փորձել է ձևակերպել արժեբանական մի շարք հարցեր, տալ դրանց պատասխանները: Բնական է, յուրաքանչյուր ժամանակաշրջան ունեցել է արժեբանական ուրույն համակարգ: <<Արժեքի>> գաղափարը կա կյանքի բոլոր ոլորտներում: Արժեքի էությունը որոշում է տվյալ հասարակության ճշմարտության գիտակցության սահմանները, արժեբանական հայեցակարգերը, որոնք արտահայտում են անհատների և սոցիալական խմբերի պահանջմունքները բավարարելու միջոց: Բնականաբար, արժեբանությունը գործում է նաև կրթական ոլորտում, ուր բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը պայմանավորում է ուսուցման կազմակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն թե՛ միջնակարգ հանրակրթական, թե՛ բարձրագույն ուսումնական համակարգերում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման ավանդական ձևերի կողքին կազմակերպվում է նորը՝ արդիականը, որոնք առաջադրում են ուսուցման ժամանակակից եղանակներ ու մեթոդներ: Հարկ է նշել, որ ուսուցման ոլորտում ժամանակակից եղանակների, մեթոդների, տեխնոլոգիաների կիրառումը խիստ էական է այնքանով, որ փոփոխվել է նոր սերնդի մտածողությունը, ինչպես նաև պահանջները: Այժմյա կենսական պահանջներից է պարզեցում, մատչելիություն, ամենակարևորը, ինքնուրույն աշխատանք կատարելու հմտություններ, ստեղծագործական մտածողության ձևավորում: 21-րդ դարում արմատական փոփոխություն են կրել մի շարք կարևոր իրույթներ. այն է տեղեկություն ստանալը, արժևորելը, օգտագործելը, կրթական նպատակները, որից էլ փոխվել է մարդու ընկալունակությունը և մտածողությունը: Արժեբանությունը հիմնականում տարբերակվում է երկու ուղղությամբ՝ 1. օբյեկտիվ իդեալիստական, երբ արժեքը դիտվում է տարածությունից և ժամանակից դուրս, երբեմն նաև սուբյեկտիվ իդեալիստական, երբ արժեքը դիտվում է որպես գիտակցության երևույթ՝ նրա մեջ տեսնելով հոգեբանական, սուբյեկտիվ

վերաբերմունք: 2. Հայտնի է նաև նատուրալիստական տեսությունը, երբ արժեքը դիտվում է որպես մարդու բնական պահանջմունքների արտահայտություն, այսպես ասած շահի տեսություն (Թորգոմյան Լ., 2011): Ըստ էության, կրթական ոլորտում նույնպես փոփոխվել են պահանջները, ավելի նյութականցվել են, և ենթագիտակցորեն տիրապետող է դարձել շահի տեսությունը: Այս հայեցակարգի ընկալումից պետք է ուշադրություն դարձնել այն խնդրին, թե ինչպես և ինչ ուղղություններով արդիականացնել կրթությունը: Քանի որ այս խնդիրը բավական ընդգրկուն է, ապա մենք մասնավորապես անդրադառնանք մեր տարորոշած <<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացին: Լեզվական գիտակարգերի համակարգում բավական ծավալուն և բազմաբովանդակ է լեզվի պատմությունը, որը ուսումնասիրվում է տարաժամանակյա կտրվածքով: Նշված դասընթացն ունի իր հետաքրքիր առանձնահատկությունը՝ համեմատած լեզվաբանական մյուս ճյուղերի հետ: Այն բավական տարողունակ է, քանի որ ընդգրկում է հայոց լեզվի սկզբնավորումից մինչև մեր օրերը: Բնականաբար, հնարավոր չէ ստեղծել մի այնպիսի դասագիրք, որը ընդգրկի այս ծավալուն ժամանակահատվածը: 21-րդ դարում առաջին տասնամյակում ստեղծվեցին հայոց լեզվի պատմության դասագրքեր՝ Է. Մկրտչյան, Լ. Խաչատրյան, <<Հայոց լեզվի պատմության դասընթաց, գրավոր շրջան>>, Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ան. Յուզբաշյան, <<Հայոց լեզվի պատմություն>>, Գ. Խաչատրյան,Թ. Շահվերդյան <<Հայոց լեզվի պատմություն>>, մինչև այդ Գ. Ջահուկյանը 20-րդ դ. վերջում իր <<Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան>>. աշխատության մեջ տվել է այդ հետաքրքիր շրջանի վերլուծությունը, և, առհասարակ, ստեղծվել են և ստեղծվում են բավական հետաքրքիր աշխատություններ, որոնք վերաբերում են լեզվի պատմության այս կամ այն շրջանին: Մեր խնդիրն է արժևորել և փորձել անդրադառնալ հայոց լեզվի պատմության այն խնդիրներին, որոնք նպաստում են ուսանողի իդեալիստական, նատուրալիստական, լեզվական արժեհամակարգի ձևավորմանը և ամբողջացմանը: Այս առարկան հիմնականում ուսումնասիրվում է հումանիտար ֆակուլտետներում, մասնավորապես հայ բանասիրության, աստվածաբանության, ինչպես նաև մագիստրոսական լեզվաբանական դասընթացներում: Մյուս կողմից, <<Հայոց լեզվի պատմությունը>> ուսումնասիրվում է նաև դպրոցում, ինչպես

ուղղագրության, բառագիտության, քերականության որոշ երևույթների ուսուցման ընթացքում, ավագ դպրոցում որոշ տեղեկություններ են տրվում հայոց լեզվի շրջաբաժանման, գրավոր տարբեր փուլերի, ինչպես նաև հայոց լեզվի հնդեվրոպական բնույթի մասին (Եզեկյան Լ., et al., 2014):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Փորձենք <<Հայոց լեզվի պատմության>> դասընթացում արժեքները ներկայացնել գիտական և գործնական տեսանկյունների միասնությամբ: Այսպես, դասընթացը, մասնավորապես նախագրային շրջանը ուսումնասիրելիս, առնչվում է հնդեվրոպաբանությանը, վիմագիր, սեպագիր աղբյուրների տվյալների ուսումնասիրությանը, օտար աղբյուրներում հայերի և հայերենի մասին գիտական նյութի իմացությանը և վերլուծությանը: Նշենք նաև, որ այս շրջանի ուսումնասիրությունը ներառում է միջմշակութային կապերի բացահայտում, տարբեր ազգերի հետ շփումներ: Ուսանողը սովորում է <<բառի>> միջոցով ստեղծել իր լեզվի, ինչու չէ, նաև իր ժողովրդի պատմությունը: Բառը խելամիտ կիրառելու դեպքում այն չգիտակցված ուժից կարող է վերածվել մարդկանց, նրանց ցանկությունների և վարքի վրա զգացական ներգործման հզոր միջոցի: <<Հայերենի կազմավորումն իբրև ինքնուրույն լեզու>> թեմայի ուսումնասիրման ժամանակ բնականաբար անդրադարձ է կատարվում մի շարք բառերի պատմությանը, օրինակ՝ <<սայլ>> բառի ստուգաբանության առաջին լուրջ փորձը պատկանում է Լիդենին, Հ. Աճառյանին, ապա Գ. Ջահուկյանին, Գամկրելիձեին, Իվանովին, Վ. Համբարձումյանին: Ուսումնասիրությունների ժամանակաշրջանը ընդգրկում է 1905-1998թթ.: <<Սայլը>> փռյուգական փոխառություն է, ապա առնչվում է Մեծ արջի համաստեղության հետ (Ջահուկյան Գ., 1987; 2010), պարզապես փոխառություն (Հ. Աճառյան, 1979), սայլը՝ իբրև երկանիվ փոխադրամիջոց համեմատվում է <<գալգալիի>> հետ, որը մեծ դեր պիտի ունենա Հայաստանի, առհասարակ Առաջավոր Ասիայի մշակութային կյանքում (Համբարձումյան Վ., 1998): Դասավանդողը նյութը ներկայացնելիս պետք է ուսանողի մոտ զարգացնի գիտական նյութի վերլուծության, զուգադրության, ընտրողության կարողություններ: Մյուս կողմից արժևորելու կարևոր մշակութային բառ-արժեքի վկայությունը սեփական ժողովրդի մասին, բայց ոչ սնապարծ միտվածությամբ, այլ իսկապես

արխաիկ ձևի և բովանդակության գիտակցումով, որը վկայում է վաղնջական շրջանի ինչպես ծիսական հավատալիքի, այնպես էլ երկրագործության մասին: Սյունիքի ժայռապատկերներում հայտնաբերվել են մ.թ.ա. IV-III հազարամյակների սայլերի պատկերներ, միաժամանակ Լճաշենի մոտ նույնպես հայտնաբերվել են միասռնի և երկսռնի ճաղեր ունեցող փայտե անիվներով սայլեր, որոնք վերաբերում են մ.թ.ա. II հազարամյակին: Այս մեկ բառի ստուգանական պատմությունը ստեղծեց առարկայական կապեր լեզվաբանության, հնագիտության, պատմության միջև, ընդսմին ցույց տվեց լեզվական ստուգաբանության անցած ժամանակը. մոտ 90 տարի շարունակ այս բառը հետաքրքրել է հնդեվրոպաբաններին. դժվար է ասել՝ վերջակետ կարելի է դնել: Ուսանողի մոտ ձևավորվում են արժեքների բոլոր երեք տիպերը՝ իդեալիստական, գիտական, <<նյութական>> արժեքը: Իդեալիստական՝ <<բառը>> ստեղծում է պատմություն, գիտական՝անդրադարձ բառի գիտական-ստուգաբանական պատմությանը, <<նյութական>>՝ բառի պատմությունը ապացուցում է հայերի հնագույն ժողովուրդ լինելը, բնիկ լինելը, հնագույն մշակույթ կրելը: <<Հայոց լեզվի պատմության>> դասընթացը նպաստում է ուսանողի մոտ զարգացնելու գիտական տեղեկույթը վերլուծելու և ընտրելու հմտություններ: Դասընթացի գործնական դասերի ընթացքում կարելի է հանձնարարել տարբեր լեզվական աշխատությունների ինքնուրույն արժևորում: Օրինակ՝ Հ. Աճառյանի <<Հայոց լեզվի պատմություն>> աշխատությունը հանձնարարվել էր արժևորելու և ներկայացնելու, ընդ որում հատվածական: Առաջին մասը ներկայացնելիս ուսանողուհին նշեց, որ ինքը շատ տպավորվել է հայ ժողովրդի հնագույն շրջանում տարբեր ժողովուրդների հետ ունեցած փոխազդեցություններից, թե որքան հետաքրքիր է, որ մենք առտնին գործածում ենք բառեր, որոնք ունեն հազարամյակների պատմություն, բայց չենք էլ մտածում այդ բառի պատմության մասին, մեր հարուստ ժառանգություն ասվածը սկսեց դառնալ շոշափելի: Մենք առաջարկում ենք <<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացի գործնական դասերին հանձնարարել ըստ ժամանակագրական հերթագայությամբ ուսումնասիրել այս գիտակարգին վերաբերող աշխատությունները և ներկայացնել (Յուզբաշյան Ա., 2022): Օրինակ, ուսանողին թողնել <<գրաբար>> եզրույթի գործածության սահմանների ճշգրտումը: Բանասերը ուսումնասիրել է <<Գրաբար>> դասընթացը,

ուսումնասիրել այդ շրջանի հնչյունական, քերականական, բառագիտական առանձնահատկությունները, ինչպես նաև բնագրերը: Հ. Աճառյանի <<Հայոց լեզվի պատմություն>> աշխատության երկրորդ մասում կա հետաքրքիր հարցադրում՝ <<Գրաբարը խոսակցական լեզու էր>>, այս հարցը միշտ էլ պատասխանի կարիք ունի: Բնավ չենք փորձում անդրադառնալ <<Գրաբար>> եզրույթին, պարզապես նշենք, որ այլ լեզուները գործածում են <<հին հայերեն>> եզրույթը, գրեթե բոլոր լեզվական աշխատություններում կողք կողքի գործածվում են <<Գրաբար>> և <<Հին հայերեն>> եզրույթները. <<Գրաբարը, գրի առնվելով, դարձավ գրական լեզու, քանի որ նրանով ստեղծվեց բավական հարուստ գրականություն>> (Մկրտչյան Է., Խաչատրյան Լ., 2016): Ուսանողը, օգտագործելով մասնագիտական գրականություն, կատարում է վերլուծական աշխատանք՝ փորձելով պատասխանել հին հայերեն, թե գրաբար հարցին, արդեն կատարում է ինքնուրույն աշխատանք: Նմանատիպ աշխատանքները այն հենքն են, որի շնորհիվ նա պետք է գրի իր կուրսային, ավարտական աշխատանքները, ավարտաճառը: <<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացն ուսանողի մոտ ձևավորում է լեզվական եզրակացություններ անելու հմտություններ: Եթե մշակութային, պատմական խնդիրներն ավելի շատ վերաբերում են նախագրային շրջանին, այն էլ պայմանական ասված, ապա պատմական ձևաբանության և շարահյուսության հարցերը քննելիս ձևավորվում է կառուցողական-վերլուծական լեզվամտածողություն: Ուսանողը գրավոր շրջանի համար անդրադառնում է քերականության հիմնահարցերին՝ հոլովման և խոնարհման համակարգին: Իբրև նմուշօրինակ ընտրենք հայերենի խոնարհման համակարգը: Հին հայերենի երեք եղանակի դիմաց ժամանակակից հայերենն ունի հինգ եղանակ:

Նախ՝ անդրադարձ ընդհանուր եղանակներին՝ սահմանական և հրամայական: Վերջիններս այն եղանակներն են, որոնք ընդհանուր են հնդեվրոպական բոլոր լեզուներում: Կիրառական և հաղորդակցական ոլորտում հաճախադեպ գործածվող եղանակներն են: Այնուհետև՝ հին հայերենի ստորադասականի դիմաց միջին հայերենում արդեն աստիճանաբար ունենք երեք եղանակ՝ ըղձական, պայմանական և ենթադրական, նախ՝ նշենք ոչ միաժամանակ, երկրորդ՝ նոր ձևերի ստեղծման հաշվին, բայց նաև ունենք կորոստ՝ հին հայերենի

հորդորական հրամայականը այլևս չի կիրառվում, ստորադասականի ձևերը կիրառվում են իբրև բուն գրաբարաբանություններ: Ուսանողին պետք է հնարավորություն տրվի վերլուծական մտքի ձևավորմանը: Նա պետք է ինքը հասկանա, թե ինչպես սահմանական ներկան աստիճանաբար վերածվեց ըղձական ապառնիի: Գրաբարում ներկայի բայաձևերը գործածվել են ըղձական ապառնու իմաստով, ընդ որում թե՛ պայմանական, թե՛ հաստատական խոսքում, օրինակ՝<<Որ ընդունի զձեզ՝ զԻս , և որ զԻսն ընդունի՝ ընդունի զԱռաքիչն Իմ>>, <<Ով ընդունի ձեզ, Ինձ կընդունի, և ով որ Ինձ կընդունի, կընդունի Ինձ Ուղարկողին>>: Այստեղ ուսանողը պետք է պատկերացնի իմաստից ձևի անցումը: Պատկերացնի այդ ճանապարհը: Մենք առաջարկում ենք գործնական վարժությունների համակարգ (Յուզբաշյան Ա., 2022): Միաժամանակ ժամանակից հայերենում նույնպես ներկան ունի իմաստային տարբեր կիրառություններ, այդ թվում նաև ապառնիի իմաստով, տանել զուգահեռ համեմատություններ: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ արևելահայերենի հինգ պակասավոր բայեր պահպանել են հին հայերենին բնորոշ համադրական կառույցի ձևերը՝ *եմ*, *կամ*, *գիտեմ*, *արժեմ*, *ունեմ*: Սրանք պակասավոր բայեր են նաև արևմտահայերենում, բացի *արժեմ* բայից, որը, ի հակադրություն մյուսների, ստանում է *կ* մասնիկ: Նման աշխատանքները ուսանողին տալիս են գիտական արժեքներ, ամենակարևորը՝ վերլուծական մտածողություն, լեզվական կառույցների ճիշտ պատկերացում, որոնք նպաստում են հետագայում նաև քերականության համակարգված դասավանդմանը:

<<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացը տալիս է նաև մշակութային արժեքները լեզվամտածողությամբ արժևորելու հնարավորություն: Վիպասանական հայերենի հատվածները վերլուծվել են և դեռ կվերլուծվեն, քանի որ իրենք իրենց մեջ պարփակում են ժամանակաշրջան, մտածողություն, սովորույթ, բառ՝ նայած գիտնականը ո՛ր ուղղությամբ է մոտենում խնդրին: Այս հատվածի մեկնությունները տվել են Հ. Աճառյանը, Գ. Ջահուկյանը, բառերի ստուգաբանությանը անդրադարձել են Գ. Տեր-Մկրտչյանը, Գ. Խալաթյանը, Վ. Համբարձումյանը. հետաքրքիր է Հ. Թումանյանի մոտեցումը: Նախ՝ նա յուրահատուկ վերաբերմունք ուներ լեզվաբանության նկատմամբ. <<Իմ լեզվական գյուտերը բանաստեղծական թռիչքներ են. մի օր մեր գիտնականները մեջտեղ կգան, էդ գյուտերով կզբաղվեն>>

(Թումանյան Ն., 1987):

Հ. Թումանյանը փորձել է բացատրել Մ. Խորենացու գրի առած <<Տենչայր տիկին Սաթենիկ տենչանս զարտախոյր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ>> հատվածը: Հետաքրքիր է Հ. Թումանյանի վերաբերմունքը, քանի որ նա նշում է, որ չի հավանել բանագետների թեր և դեմ կարծիքները, գտնում է, որ այս տողերը ունեն շատ ենթաշերտեր, քանի որ առասպելները շինում են ժողովուրդները: Թումանյանը <<արտախոյր, խաւարտ տից խաւարծի>> բառերի նշանակությունը կապում է բույսերի հետ: <<Արտախուր խոտը և տից խոտիկը>>: Լեզվաբանները <<արտախոյրը>> կապում են թագի հետ, <<խաւարծիլը>> խաւարտի հետ: Այս բառերի ստուգաբանությունը նույնպես ունի երկար ուղի՝ Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան, Վ. Համբարձումյան, վերջինս փորձում է բացահայտել բառի ստուգաբանության մեջ հեթանոսության մտածողության ենթաշերտերը (Համբարձումյան Վ., 1998): 21-րդ դարը, երբ գենդերային լեզվաբանության մեջ ուսումնասիրվում են տղամարդու և կնոջ խոսքի առանձնահատկությունները, ակամա վերլուծում ես Սաթենիկ տիկնոջ ինքնավստահ, իր ինքնարժեքը ճշմտապես բարձր գնահատող կնոջը, նրա նրբանկատ խոսքի ելևէջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերոշարադրյալը՝ <<Հայոց լեզվի պատմություն>> դասընթացն ուսանողի մոտ ստեղծում է գիտական, իդեալիստական, նատուրալիստական արժեհամակարգ: Կրթությունը հեղափոխություն է մարդ-անհատի մտոլորտում, որը պետք է ապահովի առաջընթաց մտածողություն: Ուսուցիչներն այն մարդիկ են, որ պիտի թևեր, ոգի տան ապագայի սերնդին, որ նրանք չվախենան գնալ դեպի անհայտը և բացահայտեն նորը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Թորգոմյան Լ., (2010). *Մանկավարժական արժեբանության հիմունքներ (Մագիստրատուրայի կրթական ծրագիր).* ՀՊՄՀ, Երևան.

Թումանյան Ն., (1987). *Հուշեր և զրույցներ.* Լույս, Երևան.

Համբարձումյան Վ., (1998). *Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության.* Երևան. ՀՀ ԳԱԱ.

Մկրտչյան Է., Խաչատրյան Լ.., (2016). *Հայոց լեզվի պատմության դասընթաց, Գրային ժամանակաշրջան.* Երևան. Զանգակ հրատ.

Յուզբաշյան Ա., (2022). *Հայոց լեզվի պատմության գործնական աշխատանքների ձեռնարկ.* Երևան.

Եզեկյան Լ., Սաքապետոյան Ռ., Սարգսյան Ա.. (2014). *Հայոց լեզու.* Երևան. Մանմար.

Ջահուկյան Գ., (1987). *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան.* Երևան. ՀԽՍՀ ԳԱ.

Ջահուկյան Գ., (2010). *Հայերեն ստուգաբանական բառարան.* Երևան.Ասողիկ հրատ.

Աճառյան Հ., (1979). *Հայերեն արմատական բառարան, Դ հատոր.* Երևան. ԵՊՀ հրատ.

REFERENCE LIST

Torgomyan L. (2011). Osnovy pedagogicheskih cennostej *(Bases of Pedagogical Values).* Erevan.

Tumanyan N. (1987). Napominaniya i razgovory *(Reminders and conversations).* Erevan.

Ambarcumyan V. (1998). Sovety sravnitel'noj leksikologii armyanskogo yazyka *(Advice for Comparative Lexicology of the Armenian Language).* Erevan. NAN RA:

Mkrtchyan E., Hachatryan L. (2016). Kurs istorii armyanskogo yazyka, Pis'mennyj period *(Armenian History Course, Written Period).* Erevan. Gazeta Zangak:

YUzbashyan A. (2022). Spravochnik prakticheskih rabot po istorii armyanskogo yazyka *(Handbook of practical works on the history of the Armenian language).* Erevan.

Ezekyan L., Sakapetoyan R., Sargsyan A. (2014). Armyanskij yazyk *(The Armenian language).* Erevan. Manmar:

Dzhaukyan G. (1987). Istoriya armyanskogo yazyka. predpisyvayushchij period *(History of the Armenian language. prescriptive period).* Erevan. GA ASSR:

Dzhaukyan G. (2010). Armyanskij etimologicheskij slovar' *(Armenian etymological dictionary)*. Erevan: Gazeta Asogik.

Acharyan G. (1979). Armyanskij kornevoj slovar' *(Armenian dictionary)*, tom D. Erevan. Press-sluzhba EGU.

РЕЗЮМЕ

ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ СИСТЕМЫ ЦЕННОСТЕЙ СТУДЕНТА ПО КУРСУ «ИСТОРИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА»

ЮЗБАШЯН АШХЕН

Высшее образование должно формировать у обучающегося такую систему ценностей, которая является конкурентоспособной, соответствующей современному времени. Курс «История армянского языка» формирует у учащегося языковое мышление, культурные и идеалистические ценности. Как лингвистическая дисциплина, курс развивает у учащегося навыки самостоятельного исследования и выводов. Курс «История армянского языка» формирует у студента научную, идеалистическую, натуралистическую систему ценностей. В статье рассматриваются проблемы формирования системы ценностей в разное время, которые закономерно изменяются в соответствии с требованиями времени. Поэтому, исходя из требований времени, ценности курса «История армянского языка» представлены в единстве научной и практической точек зрения. Таким образом, целью статьи является оценка и решение проблем истории армянского языка, способствующих формированию и завершению идеалистической, натуралистической, лингвистической системы ценностей учащегося. Предлагается система упражнений и навыков, направленных на формирование системы ценностей с учетом запросов и интересов современного студента, которые получены в результате самостоятельного анализа и исследования.

Ключевые слова: система ценностей, история армянского языка, письменность, идеалистическая ценность, индоевропейское учение, литография, клинописные источники, культурная ценность.

ABSTRACT

PROBLEMS OF FORMING A STUDENT'S VALUE SYSTEM WITHIN 'HISTORY OF THE ARMENIAN LANGUAGE' COURSE

YUZBASHYAN ASHKHEN

Higher education should form such a value system in a learner, which is competitive, in keeping with the modern period. The "History of the Armenian Language" course forms linguistic thinking, cultural and idealistic values in a learner. As a linguistic discipline, the course develops in a learner skills to make independent research and conclusions. The "History of the Armenian Language" course creates a student's scientific, idealistic, naturalistic value system. The article examines the problems of the formation of the value system at different times, which naturally and regularly are changing in accordance with the requirements of the time. Therefore, based on the requirements of the time, the values in the "History of the Armenian Language" course are presented in the unity of scientific and practical perspectives. Thus, the purpose of the article is to value and address the problems of the history of the Armenian language that contribute to the formation and completion of the student's idealistic, naturalistic, linguistic value system. A system of exercises and skills aimed at the formation of the value system is proposed, considering the demands and interests of the modern student, which are obtained as a result of independent analysis and research.

Key words: value system, history of the Armenian language, writing, idealistic value, Indo-European studies, lithography, cuneiform sources, cultural value.

Հոդվածը ստացվել է՝ 09.02.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 10.02.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 16.03.2023թ.